ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2019

02.2019

03.2019

04.2019
Ապրիլ

05.2019

06.2019

07.2019

08.2019

09.2019

10.2019

11.2019

12.2019

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 26-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2019

Ապրիլ

թիվ 4 (248)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-18-Ն ՀՀ օրենքը

8 «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին ՀՕ-19-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

10 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԱՐՏ ԿՐԵԴԻՏ», «ԳՐԱՎԱՏՈՒՆ 777», «ՎԱՐԴ ԳՐԻԳ» ՍՊԸ-ների գրավատնային գործունեության լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ին «ՄԱՆԻՏՈՒՆ» (MONEYTUN) արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու վերաբերյալ

10 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «Արցախբանկ» ՓԲԸ «Ագաթանգեղոս» մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլատրելու վերաբերյալ

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 59Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

10 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 4 արտարժույթի փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 47-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 70-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

12 ՎԻճԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին***

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Դուստր և կախյալ ընկերություններն իրավունք չունեն գնելու հիմնական ընկերության թողարկած բաժնետոմսերը:»:

Հոդված 2. Օրենքի 38-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի առաջին պարբերության «տեսակի» բառը հանել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Բաժնետերերի ընդհանուր ժողովում արտոնյալ բաժնետոմսերի դասերով նախատեսված իրավունքների սահմանափակմանը վերաբերող հարցերի քննարկմանը կարող են մասնակցել այդ բաժնետոմսերի սեփականատերերը կամ անվանատերերը: Ընդ որում, իրավունքների սահմանափակման վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել միայն այն պարագայում, երբ այդ որոշմանը կողմ են քվեարկել համապատասխան դասի արտոնյալ բաժնետոմսերի առնվազն 3/4-ի սեփականատերերը կամ անվանատերերը, եթե Ընկերության կանոնադրությամբ սեփականատերերի կամ անվանատերերի առավել մեծ թիվ սահմանված չէ:

Սույն մասի իմաստով իրավունքների սահմանափակում են համարվում արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժինների (շահութաբաժինների) նվազեցումը, հաշվարկման և (կամ) վճարման կարգի փոփոխությունները:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 38.1-ին հոդվածով.

«Հոդված 38.1. Բաժնետիրական համաձայնագիրը

1. Բաժնետիրական համաձայնագիրը բաժնետոմսերով հավաստվող իրավունքների իրականացման և (կամ) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների իրականացման առանձնահատկությունների մասին պայմանագիր է: Բաժնետիրական համաձայնագրով կողմերը պարտավորվում են որոշակի ձևով իրականացնել բաժնետոմսերով հավաստվող իրավունքները և (կամ) բաժնետոմսերի նկատմամբ իրավունքները կամ ձեռնպահ մնալ այդ իրավունքների իրականացումից: Բաժնետիրական համաձայնագրով կարող է նախատեսվել բաժնետերերի ընդհանուր ժողովում համաձայնագրով սահմանված ձևով քվեարկելու, քվեարկության կարգը կամ քվեարկությունն այլ անձանց հետ համաձայնեցնելու, այլ անձանց ցուցումներով քվեարկելու, բաժնետոմսերը նախապես սահմանված գնով և (կամ) պայմանագրով սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ձեռք բերելու և (կամ) օտարելու, մինչև պայմանագրով հանգամանքների ի հայտ գալը բաժնետոմսերի օտարումից ձեռնպահ մնալու, ինչպես նաև բաժնետիրական Ընկերության կառավարման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման հետ կապված այլ համաձայնեցված գործողություններ իրականացնելու պարտավորությունը: Ընկերության ժողովում որոշումների ընդունման համար բավարար ձայների՝ սույն օրենքով կամ սույն օրենքի հիման վրա կանոնադրությամբ նախատեսված քանակը չի կարող փոփոխվել բաժնետիրական համաձայնագրով:

2. Բաժնետիրական համաձայնագիրը կնքվում է գրավոր: Բաժնետիրական համաձայնագրի կողմ կարող են լինել Ընկերությունը, բաժնետերերը, ինչպես նաև այն անձինք, որոնք բաժանորդագրվում են Ընկերության բաժնետոմսերին: Եթե Ընկերությունը հանդիսանում է բաժնետիրական համաձայնագրի կողմ, ապա այդպիսի բաժնետիրական համաձայնագրի կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև սույն օրենքի 9-րդ գլխի դրույթները:

---

* *ՀՀՊՏ 2001 N 34 (166),06.11.01:*

** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2019 թվականի ապրիլի 19-ին (ՀՀՊՏ N 27 (1480), 26.04.19):

3. Բաժնետիրական համաձայնագրի առարկա չի կարող լինել Ընկերության խորհրդի կամ գործադիր մարմնի ցուցումների համաձայն բաժնետիրական համաձայնագրի կողմերի քվեարկելու պարտավորությունը:

4. Բաժնետիրական համաձայնագիրը պարտադիր է միայն համաձայնագրի կողմերի համար:

5. Բաժնետիրական համաձայնագրի խախտումը կարող է հիմք հանդիսանալ Ընկերության կառավարման մարմինների որոշումներն անվավեր ճանաչելու համար, եթե ապացուցվում է, որ Ընկերության կառավարման մարմինների որոշումներն ընդունվել են ֆիդուցիար պարտականությունների խախտմամբ:

6. Բաժնետիրական համաձայնագրով կարող են նախատեսվել դրանից բխող պարտավորությունների կատարման ապահովման, ինչպես նաև դրանով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ:»:

Հոդված 4. Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Բաց ընկերության ժողովն իրավունք ունի որոշելու չկիրառել (կասեցնելու) քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված նախապատվության իրավունքը, ինչպես նաև սահմանելու այդ որոշման գործողության ժամկետը, եթե քվեարկող բաժնետոմսերը տեղաբաշխվում են բաց բաժանորդագրության միջոցով, և տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով:

3. Նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը դադարում է, եթե մինչև դրա ավարտվելն Ընկերության բոլոր բաժնետերերից ստացվել է նախապատվության իրավունքից օգտվելու կամ օգտվելուց հրաժարվելու վերաբերյալ գրավոր ծանուցում:»:

Հոդված 5. Օրենքի 49-րդ հոդվածի 4-րդ մասն առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Տարեկան և միջանկյալ շահութաբաժինները վճարվում են շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:»:

Հոդված 6. Օրենքի 64-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի երկրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ մասի «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին.»:

Հոդված 7. Օրենքի 68-րդ հոդվածի 13-րդ մասի երկրորդ նախադասությունը հանել:

Հոդված 8. Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության «15» թիվը փոխարինել «21» թվով:

Հոդված 9. Օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ.1» կետով.

«ժ.1) խորհրդին կից հանձնաժողովների (հանձնախմբերի) ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի.»:

Հոդված 10. Օրենքի 85-րդ հոդվածի 5-րդ մասն առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Բաց ընկերություններում խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդը պետք է լինի անկախ: Եթե մեկ երրորդը բնական թիվ չէ, ապա խորհրդի անկախ անդամների թիվ է համարվում մեկ երրորդին առավել մոտ ամբողջ թիվը:

Խորհրդի անկախ անդամ կարող է ընտրվել այն անձը, որը՝

ա) վերջին երեք տարվա ընթացքում ընկերությունում գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել ընկերությունում կամ դրա հետ փոխկապակցված այլ անձի մոտ.

բ) վերջին երեք տարվա ընթացքում ընկերությունից կամ ընկերության հետ փոխկապակցված անձից (անձանցից) ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես խորհրդի անդամ ստացած վարձատրության.

գ) վերջին երեք տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ (ներկայացուցիչ) չի ունեցել էական որևէ գործարար հարաբերություն ընկերության և (կամ) ընկերության հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ.

դ) վերջին հինգ տարվա ընթացքում չի հանդիսացել ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի և (կամ) դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) բաժնետեր և (կամ) աշխատող.

ե) վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել ընկերության խորհրդի անդամ.

զ) չի հանդիսանում ընկերության նշանակալից բաժնետեր.

է) վերջին մեկ տարվա ընթացքում անմիջական հսկողություն չի իրականացրել ընկերության նկատմամբ՝ որպես հանրային ծառայող.

ը) չի հանդիսանում սույն մասի «ա-է» կետերում նշված անձանցից որևէ մեկի ընտանիքի անդամ:

Սույն մասի «գ» կետի իմաստով նշանակալից է համարվում ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը:

Խորհրդի անկախ անդամին վերաբերող սահմանափակումները գործում են նաև խորհրդի անկախ անդամի պարտականությունները կատարելու ժամանակահատվածում:»:

Հոդված 11. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 87.1-ին հոդվածով.

«Հոդված 87.1. Բաց ընկերություններում խորհրդին կից աուդիտի հանձնաժողովը

1. Բաց ընկերությունում ձևավորվում է խորհրդին կից աուդիտի հանձնաժողով:

2. Բաց ընկերությունում խորհրդին կից աուդիտի հանձնաժողովը (այսուհետ՝ Աուդիտի հանձնաժողով) կազմված է բացառապես խորհրդի անդամներից: Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է լինի խորհրդի անկախ անդամ:

3. Աուդիտի հանձնաժողովի անդամ չի կարող լինել այն անձը, որը ներգրավված է ընկերության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ:

4. Աուդիտի հանձնաժողովի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից: Աուդիտի հանձնաժողովի նախագահը պետք է լինի խորհրդի անկախ անդամ: Խորհրդի նախագահի և Աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

5. Աուդիտի հանձնաժողովը՝

ա) իրականացնում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների և ընկերության գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների արժանահավատության ապահովման գործընթացի վերահսկում (ստուգում).

բ) իրականացնում է Ընկերության եռամսյակային և տարեկան հաշվետվությունների վերլուծություն և դրանց հաստատման վերաբերյալ խորհրդին առաջարկություններ է ներկայացնում.

գ) իրականացնում է Ընկերության ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման, գործող օրենքներին, իրավական ակտերին և այլ պահանջներին համապատասխանելու համակարգերի գործունեության ստուգում.

դ) խորհրդին առաջարկություններ է ներկայացնում Ընկերության արտաքին աուդիտորի ընտրության չափանիշների, վարձատրության և այլ էական պայմանների վերաբերյալ.

ե) իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի անկախության, օբյեկտիվության և արդյունավետության վերահսկում ու վերլուծություն.

զ) տարեկան առնվազն մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտորի հետ.

է) իրականացնում է Ընկերության արտաքին աուդիտորի հաշվետվությունների վերլուծություն և համապատասխան տեղեկատվություն է տրամադրում խորհրդին.

ը) հետևում է Ընկերության արտաքին աուդիտորի առաջարկությունների իրականացմանը.

թ) իրականացնում է Ընկերության ներքին հսկողության համակարգի վերաբերյալ քաղաքականությունների մշակում և հետևում է դրանց ներդրմանը:

Ընկերության կանոնադրությամբ կամ ներքին իրավական ակտերով կարող են սահմանվել Աուդիտի հանձնաժողովի այլ իրավասություններ:»:

Հոդված 12. Օրենքի 90-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունը «հնարավոր բախումներից» բառերից հետո լրացնել «(ֆիդուցիար պարտականություն)» բառերով:

Հոդված 13. Օրենքի 93-րդ հոդվածի 1.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Եթե շահագրգռվածության առկայությամբ գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին, ապա անկախ գնահատողը մինչև գործարքի կնքման որոշումն ընդունելը տալիս է եզրակացություն գործարքի՝ շուկայական արժեքին համապատասխանության վերաբերյալ:»:

Հոդված 14. Օրենքի 96-րդ հոդվածի 1.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Բաց Ընկերությունը պարտավոր է սույն օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով սահմանված շահագրգռվածության առկայությամբ գործարք կնքելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև սույն օրենքի 93-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված եզրակացությունը տրամադրել Ընկերության բոլոր բաժնետերերին կամ գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև սույն օրենքի 93-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված եզրակացությունը հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում, եթե Ընկերությունը չունի իր պաշտոնական ինտերնետային կայքը:»:

Հոդված 15. Սույն օրենքի 5-րդ հոդվածի դրույթը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շահութաբաժինների վճարման մասին ընդունված որոշումների վրա:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
25 ապրիլի 2019 թ., Երևան, ՀՕ-18-Ն

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին***

Հոդված 1. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-252 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Շահույթը բաշխվում է շահույթի բաշխման մասին որոշումն ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:»:

Հոդված 2. Օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Եթե ընկերությունում ձևավորվել է խորհուրդ, ապա արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, ընկերության գործադիր մարմնի կամ պահանջը ներկայացնելու պահի դրությամբ ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով: Ընկերությունում խորհուրդ չձևավորվելու դեպքում արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է ընկերության գործադիր մարմնի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ կամ պահանջը ներկայացնելու պահի դրությամբ ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով:

Պահանջը ներկայացնելու պահի դրությամբ ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով արտահերթ ընդհանուր ժողով գումարվելու դեպքում ժողովի գումարման ձևը և օրակարգը սահմանում է (են) այն գումարելու պահանջը ներկայացրած մասնակիցը (մասնակիցները):

Եթե պահանջում նշված ժամկետում իրավասու մարմինն արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ընդհանուր ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջ ներկայացրած անձինք:»:

Հոդված 3. Սույն օրենքի 1-ին հոդվածի դրույթը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո շահութաբաժինների վճարման մասին ընդունված որոշումների վրա:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
25 ապրիլի 2019 թ., Երևան, ՀՕ-19-Ն

---

* *ՀՀՊՏ 2001 N 38 (170), 07.12.01:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2019 թվականի ապրիլի 19-ին (ՀՀՊՏ N 27 (1480), 26.04.19):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԱՐՏ ԿՐԵԴԻՏ», «ԳՐԱՎԱՏՈՒՆ 777», «ՎԱՐԴ ԳՐԻԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատնային գործունեության լիցենզիաները (որոշումներ թիվ 42Ա, 43Ա, 44Ա):
- «ՄԱՆԻՏՈՒՆ» (MONEYTUN) արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության ***թույլտվություն է տրամադրվել*** «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 50Ա):
- ***Թույլատրվել է*** «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Ագաթան-գեղոս» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/217Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 4 արտարժույթի փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/186Ա, 1/223Ա, 1/224Ա, 1/225Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2019 թ. ապրիլի 30-ի թիվ 59Ա որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 5.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 7.25%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.25%:***

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 70-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պարբերականների թողարկման և հրապարակման կարգն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 70-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան

17 ապրիլի 2019 թ., N 47-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. ապրիլի 12-ին (ՀՀՊՏ N10 (646), 02.05.2019):

(ԱՊՐԻԼ 2019)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 16

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների փոփոխություն

Գնաճ

Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 20

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 25

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 26

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 36

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 53

Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 63
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 65
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 73
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Անվանում	*2019 թ. մարտ*	*2019 թ. մարտի իրական աճի փոփոխությունը 2018 թ. մարտի նկատմամբ (%)*	*2019 թ. ապրիլ*	*2019 թ. ապրիլի իրական աճի փոփոխությունը 2018 թ. ապրիլի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		5.8[1]		9.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	160751.9[1]	2.1[1]	151122.4	13.2
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	22612.1	0.5	20475.0	1.8
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	239662.6	5.3	235038.9	9.0
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	153136.1	16.9	153926.8	16.2
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	628.2	3.4	607.3	8.9
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	218275[1]	6.9[2]	217251[3]	6.4[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2019 թ.	*Գնաճ*	*Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը*	*Գների փոփոխությունը շինարարությունում*	*Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.8	-0.3	-3.3	4.5
Փետրվար	0.6	1.6	4.1	-2.8
Մարտ	0.1	0.7	-3.0	-0.9
Ապրիլ	-0.1	-3.5	1.7	-2.7
2019 թ. հունվար – ապրիլը 2018 թ. հունվար – ապրիլի նկատմամբ	1.7	0.4	-3.3	1.8

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	2017	2018	2019
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.6	2.8	1.8
Փետրվար	-0.9	-0.5	0.6
Մարտ	-0.3	0.1	0.1
Ապրիլ	1.0	-0.3	-0.1
Մայիս	-0.2	-1.0	
Հունիս	-0.9	-1.6	
Հուլիս	-2.6	-1.2	
Օգոստոս	-0.4	0.6	
Սեպտեմբեր	0.2	0.3	
Հոկտեմբեր	0.8	0.1	
Նոյեմբեր	2.0	1.0	
Դեկտեմբեր	1.5	1.5	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	-0.6	2.9	0.8
Փետրվար	-0.2	3.3	1.9
Մարտ	-0.1	3.7	1.9
Ապրիլ	1.2	2.4	2.2
Մայիս	1.6	1.6	
Հունիս	1.1	0.9	
Հուլիս	0.9	2.3	
Օգոստոս	0.9	3.3	
Սեպտեմբեր	1.0	3.5	
Հոկտեմբեր	1.2	2.8	
Նոյեմբեր	2.2	1.8	
Դեկտեմբեր	2.6	1.8	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ[5]

Անվանում	2019 թ. ապրիլը 2018 թ. ապրիլի նկատմամբ (%)	Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)
Գնաճ	**2.2**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	3.9	1.6
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	4.3	0.2
Հագուստ և կոշիկ	3.7	0.2
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.2	0.0
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	0.5	0.0
Առողջապահություն	2.3	0.2
Տրանսպորտ	-0.5	0.0
Կապ	-0.6	0.0
Հանգիստ և մշակույթ	-2.3	0.0
Կրթություն	1.4	0.0
Ռեստորաններ և հյուրանոցներ	1.9	0.0
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	0.4	0.0

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀ [5,6]

ժամանակաշրջան	2017	2018	2019
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.0	0.3	-0.2
Փետրվար	0.0	0.2	0.0
Մարտ	0.2	0.1	0.1
Ապրիլ	0.4	-0.1	-0.1
Մայիս	0.2	-0.2	
Հունիս	0.0	-0.3	
Հուլիս	-0.1	-0.3	
Օգոստոս	0.4	0.3	
Սեպտեմբեր	0.4	0.8	
Հոկտեմբեր	0.8	0.8	
Նոյեմբեր	0.7	0.2	
Դեկտեմբեր	0.3	0.0	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	-1.6	4.3	0.9
Փետրվար	-1.2	4.6	0.7
Մարտ	-0.9	4.3	0.6
Ապրիլ	-0.3	3.7	0.8
Մայիս	0.3	3.2	
Հունիս	0.7	2.8	
Հուլիս	0.9	2.5	
Օգոստոս	1.3	2.4	
Սեպտեմբեր	1.6	2.7	
Հոկտեմբեր	1.9	2.5	
Նոյեմբեր	2.8	1.8	
Դեկտեմբեր	3.3	1.5	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
2019 թ. ապրիլը 2018 թ. ապրիլի նկատմամբ	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**0.8**
Հավի ծու	0.4
Հավի միս	0.3
Հավի բուդ	0.1
Ծխագլանակներ ֆիլտրով՝ հայրենական արտադրության	0.1
Ալյուր ցորենի, բարձր տեսակի	0.1
Սրտաբանական ծառայություններ	0.0
Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար	-0.1
Օդային տրանսպորտի միջազգային չվերթներ իրականացնող ծառայություններ	-0.1
Բենզին	-0.1
Պանիր կովի կաթից	-0.1
Պանիր տնական	-0.1
Շաքարավազ	-0.1
Միս տավարի և հորթի	-0.1
Միջազգային հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ	-0.1
Միս խոզի	-0.1

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:
[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայված տվյալների հիման վրա:
[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:
[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:
[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:
[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2019 թ. հունվար – մարտ (մլն ԱՄՆ դոլար)	2019 թ. հունվար – մարտը 2018 թ. հունվար – մարտի նկատմամբ (%)	2019 թ. հունվար – ապրիլ (մլն ԱՄՆ դոլար)	2019 թ. հունվար – ապրիլը 2018 թ. հունվար – ապրիլի նկատմամբ (%)
Արտահանում *(ՖՕԲ)*	543.0	91.4	716.3	91.4
Ներմուծում *(ՍԻՖ)*	1085.8	96.9	1465.1	98.1
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	542.8	103.1	748.8	105.4

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2018 թվական					
	Ապրիլ			Հունվար – ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	69217	30486	38730	270963	131810	139153
ԱՄՆ	15926	15737	189	60199	64551	-4352
Ուկրաինա	744	1046	-303	2951	5307	-2357
Ղազախստան	4486	359	4127	9629	1210	8419
Գերմանիա	3914	12431	-8518	13412	18618	-5206
Իսպանիա	798	712	86	3378	5053	-1675
Ֆրանսիա	4511	2004	2507	25607	5793	19814
ԱՄԷ	1984	1817	167	6231	8274	-2043
Չինաստան	271	3291	-3020	1031	17659	-16627
Թուրքիա	116	480	-365	670	2920	-2250
Այլ երկրներ	23428	25362	-1934	89623	105947	-16324
Ընդամենը	**125394**	**93726**	**31667**	**483694**	**367143**	**116551**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2019 թվական					
	Ապրիլ			Հունվար – ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	77085	33968	43117	272722	153699	119023
ԱՄՆ	24354	21936	2418	81780	74564	7217
Ուկրաինա	858	1147	-289	3078	4376	-1298
Ղազախստան	2163	414	1749	8297	1450	6847
Գերմանիա	3125	2249	875	12246	9671	2575
Իսպանիա	1006	2376	-1370	3577	5271	-1694
Ֆրանսիա	3156	1438	1718	10178	5101	5077
ԱՄԷ	1766	1472	294	6432	5581	851
Չինաստան	244	5147	-4904	1399	16574	-15174
Թուրքիա	159	937	-778	684	2997	-2313
Այլ երկրներ	30406	39228	-8823	135394	117652	17742
Ընդամենը	**144322**	**110314**	**34008**	**535787**	**396935**	**138852**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2018 թվական					
	Ապրիլ			Հունվար – ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	33299	14670	18629	130375	63422	66953
ԱՄՆ	7665	7572	93	28978	31076	-2098
Ուկրաինա	358	503	-146	1420	2553	-1134
Ղազախստան	2158	173	1986	4634	582	4052
Գերմանիա	1881	5992	-4111	6454	8970	-2516
Իսպանիա	384	343	42	1626	2432	-806
Ֆրանսիա	2132	964	1168	12298	2789	9510
ԱՄԷ	954	874	80	2999	3981	-982
Չինաստան	130	1583	-1453	496	8501	-8005
Թուրքիա	56	231	-176	323	1406	-1083
Այլ երկրներ	11275	12206	-931	43141	50991	-7850
Ընդամենը	**60294**	**45113**	**15181**	**232744**	**176703**	**56041**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2019 թվական					
	Ապրիլ			Հունվար – ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	37323	16473	20850	132678	74792	57886
ԱՄՆ	11795	10615	1180	39782	36252	3530
Ուկրաինա	415	556	-140	1498	2130	-632
Ղազախստան	1048	201	847	4036	706	3331
Գերմանիա	1513	1089	424	5959	4707	1252
Իսպանիա	487	1153	-666	1740	2565	-825
Ֆրանսիա	1529	696	834	4950	2482	2468
ԱՄԷ	854	712	142	3126	2714	412
Չինաստան	118	2492	-2374	682	8056	-7375
Թուրքիա	77	455	-378	333	1459	-1126
Այլ երկրներ	14728	18968	-4240	65863	57199	8664
Ընդամենը	**69887**	**53408**	**16479**	**260647**	**193062**	**67586**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3]

2018	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	134.8	132.4	132.2	133.7	134.7	133.8	133.5	137.5	137.3	135.8	136.4	140.1
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	257.5	255.3	255.9	260.6	266.6	270.3	273.4	281.5	283.4	282.0	281.1	282.0
2019	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	141.8	140.9	140.7	141.4								
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	280.6	277.4	278.2	281.1								


[1] Հաշվարկում ընդգրկված են 12 գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:
[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:
[3] Աճը նշանակում է արժևորում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2018	2019			
	Դ [3]	Հ	Փ	Մ[3]	Ա
Համախառն միջազգային պահուստներ	**2259.3**	**1994.2**	**2074.3**	**2154.2**	**2150.7**
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	6.0	5.0	3.5	2.1	2.1
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	2253.4	1989.2	2070.8	2152.1	2148.6

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*
[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*
[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2018	2019			
	Դ [2]	Հ	Փ	Մ[2]	Ա
Համախառն արտաքին պարտավորություններ	**676.3**	**677.5**	**675.9**	**671.2**	**668.7**
ԱՄՀ վարկ	249.2	250.7	250.0	247.3	246.6
ՀՓԻ տեղաբաշխում	122.6	123.3	123.1	122.4	122.0
Այլ վարկեր	302.9	302.5	302.1	300.4	299.2
Այլ պարտավորություններ	1.7	1.0	0.8	1.1	0.9

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:
[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ	Պարտավորություններ Կառավարության նկատմամբ	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական պարտատոմսեր	Կառավարության ավանդներ և հաշիվներ (ներառյալ ՕԻԳ-երի միջոցները)	
2018			
Դեկտեմբեր[1]	13708	185968	**-172260**
2019			
Հունվար	13593	240215	**-226622**
Փետրվար	13437	232881	**-219444**
Մարտ	13538	229752	**-216214**
Ապրիլ	12192	247058	**-234865**

[1] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա [1] *(մլմ ՀՀ դրամ)*	Շրջանառությունում կանխիկ դրամ *(մլմ ՀՀ դրամ)*	Ցպահանջ ավանդներ դրամով *(մլմ ՀՀ դրամ)*	M1 [2] *(մլմ ՀՀ դրամ)*	Ժամկետային ավանդներ դրամով *(տոմս ՀՀ դր.)*	M2 [3] *(մլմ ՀՀ դրամ)*	Արտարժույթով ավանդներ *(մլմ ՀՀ դրամ)*	M2X [4] *(մլմ ՀՀ դրամ)*	Փողի բազմապատիկ [5]	Դրամային բազմապատիկ [6]
2018										
Դեկտեմբեր	1215585	476996	418276	895272	671552	1566824	1208271	2775095	2.28	1.63
2019										
Հունվար	1068346	440502	406887	847389	686214	1533602	1193930	2727532	2.55	1.64
Փետրվար	1117143	439845	408665	848510	709551	1558061	1201436	2759497	2.47	1.68
Մարտ	1195608	434436	408860	843296	720887	1564183	1185961	2750144	2.30	1.65
Ապրիլ	1199427	427914	405274	833188	738350	1571538	1192757	2764294	2.30	1.61

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
1,250,000
1,000,000
750,000
500,000
250,000
0
Այլ հաշիվներ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
3,000,000
2,500,000
2,000,000
1,500,000
1,000,000
500,000
0
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
25
20
15
10



Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
45
40
35
30
25


ՄԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]


մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2018					
Հունվար	970525	418352	744172	1349215	2534434
Փետրվար	980089	421422	746124	1358690	2536578
Մարտ	993992	425208	764179	1383566	2566415
Ապրիլ	915814	425189	760468	1376397	2530276
Մայիս	972578	434829	780606	1407104	2557946
Հունիս	1019346	443758	787793	1416594	2584117
Հուլիս	1017499	443262	796799	1431800	2610384
Օգոստոս	1006790	445636	804282	1447024	2624676
Սեպտեմբեր	1091250	448504	820746	1466735	2655081
Հոկտեմբեր	1048304	450764	828612	1484878	2669036
Նոյեմբեր	1089159	451361	836401	1498392	2685982
Դեկտեմբեր	1073606	449328	840345	1524031	2700747
2019					
Հունվար	1064105	450879	853273	1542510	2715349
Փետրվար	1114791	457934	864959	1563144	2753929
Մարտ	1156139	456615	859509	1570161	2754012
Ապրիլ	1244641	446983	865871	1586547	2784044

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով, ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի տարվա առաջին համարում: Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:*


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
1,300,000
1,200,000
1,100,000
1,000,000
900,000
800,000
700,000
600,000
500,000
Փողի բազայի փաստացի շարքեր
Փողի բազայի հարթեցված շարքեր


Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
510,000
460,000
410,000
360,000
310,000
260,000
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի շարքեր
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի հարթեցված շարքեր


Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
1,700,000
1,500,000
1,300,000
1,100,000
900,000
700,000
500,000
Դրամային զանգվածի փաստացի շարքեր
Դրամային զանգվածի հարթեցված շարքեր


Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
3,000,000
2,800,000
2,600,000
2,400,000
2,200,000
2,000,000
1,800,000
1,600,000
1,400,000
1,200,000
1,000,000
Փողի զանգվածի փաստացի շարքեր
Փողի զանգվածի հարթեցված շարքեր

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2018	2019			
	Դ [2]	Հ	Փ	Մ[2]	Ա
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)					
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***765792***	***641240***	***684789***	***721406***	***712083***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***449794***	***427106***	***432354***	***474202***	***487344***
Կառավարություն	-172260	-226622	-219444	-216214	-234865
Բանկեր	299069	326280	326769	364324	404016
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	163433	180879	180074	220323	260627
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոպ	5351	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավում (-)	-12306	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	0	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոպ (-)	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	322985	327449	325029	326092	318193
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***1215585***	***1068346***	***1117143***	***1195608***	***1199427***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	566706	506946	505126	503301	502657
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	351870	378781	369895	384621	422464
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	244798	123751	183123	243170	215173
Այլ հաշիվներ	52211	58868	58998	64516	59132
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	40796	47275	53756	59262	53789
Այլ հաշիվներ արտարժույթով	11415	11593	5242	5254	5343
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-124552***	***43549***	***36617***	***-9323***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-22687***	***5248***	***41848***	***13142***
Կառավարություն	-	-54362	7178	3231	-18652
Բանկեր	-	27210	490	37554	39693
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	17446	-805	40249	40304
Դրամական միջոցների ներգրավում (-)	-	-12306	0	0	0
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	-	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	4464	-2420	1063	-7899
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-147240***	***48797***	***78465***	***3819***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-59761	-1819	-1826	-643
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	26912	-8886	14725	37844
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-121047	59372	60047	-27998
Այլ հաշիվներ	-	6657	130	5518	-5384
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	-	6479	6481	5505	-5472
Այլ հաշիվներ արտարժույթով	-	178	-6351	13	89
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-16.3***	***6.8***	***5.3***	***-1.3***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-5.0***	***1.2***	***9.7***	***2.8***
Կառավարություն	-	-31.6	3.2	1.5	-8.6
Բանկեր	-	9.1	0.2	11.5	10.9
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0.0	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	1.4	-0.7	0.3	-2.4
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-12.1***	***4.6***	***7.0***	***0.3***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-10.5	-0.4	-0.4	-0.1
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	7.6	-2.3	4.0	9.8
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-49.4	48.0	32.8	-11.5
Այլ հաշիվներ	-	12.7	0.2	9.4	-8.3

[1] Զուտ միջազգային պահուստներն (ԶՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: ԶՄՊ-երը հաշվարկված են փաստացի փոխարժեքներով:
[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2018	2019			
	Դ	Հ	Փ	Մ	Ա
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-852445**	**-747581**	**-830956**	**-879544**	**-830784**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	416508	545444	499994	450271	518400
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-1101765	-1123876	-1155841	-1147150	-1163463
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-167188	-169149	-175109	-182665	-185721
ԶՆԱ	**3129845**	**2998949**	**3110938**	**3139551**	**3113411**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	505901	496111	509471	541679	517838
Պահանջներ Կառավարության նկատմամբ	539890	531316	543568	575329	555080
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-33990	-35205	-34098	-33650	-37242
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	430443	288048	331345	371335	354955
Պահանջներ ԿԲ նկատմամբ	697046	573937	616669	693246	715981
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ (-)	-266603	-285889	-285324	-321911	-361026
Տնտեսություն	3015024	3030507	3094433	3091053	3134281
Ձեռնարկություններ	1642773	1641912	1677211	1642063	1631966
Դրամով	360352	357434	358273	361827	363468
Արտարժույթով	1218675	1219197	1253548	1213811	1203455
Արժեթղթեր	63746	65281	65390	66425	65043
Տնային տնտեսություններ	1153271	1169452	1193752	1224420	1270826
Դրամով	852393	871136	895459	925002	973405
Արտարժույթով	300878	298316	298294	299419	297421
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	120347	118612	118430	112048	111458
Դրամով	66807	65111	65660	60368	61191
Արտարժույթով	53540	53501	52770	51680	50267
Այլ ֆինանսական կազմակերպություններ	98633	100531	105041	112522	120031
Դրամով	73923	78539	81319	82832	87245
Արտարժույթով	24710	21992	23722	29690	32786
Զուտ այլ ակտիվներ	-821522	-815717	-824312	-864516	-893663
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	57458	57483	58210	58411	56160
Արտաքին ակտիվներ ոչ փոխարկելի արտարժույթով	631	466	416	436	325
Արտաքին պարտավորություններ ոչ փոխարկելի արտարժույթով (-)	-89	-113	-113	-81	-8
Ներդրումներ փայաբաժիններում	6618	6697	6765	6780	6803
Միջբանկային պահանջներ	78664	72938	55609	76996	77359
Այլ ակտիվներ	255285	248151	254628	262486	254119
Միջբանկային պարտավորություններ (-)	-76092	-70214	-52643	-73536	-74054
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (-)	-121006	-122504	-125858	-127956	-129748
Կապիտալ հաշիվներ (-)	-747125	-748101	-758921	-767414	-770712
Այլ պարտավորություններ (-)	-275867	-260519	-262403	-300637	-313906
ԱՎԱՆԴՆԵՐ	**2277401**	**2251368**	**2279982**	**2260006**	**2282627**
Դրամով ավանդներ	1083044	1074390	1091852	1097825	1116819
Ցպահանջ ավանդներ	380570	362940	358514	354149	355413
